# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 17

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՆԻՍՏԻ

ք. Երևան 25.11.2020

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նախագահի 11.11.2020 N 15-Լ որոշմամբ՝ Տեսչական մարմնի 2021 թվականի տարեկան գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերի, պահպանման ծախսերի նախահաշվի և որակի վարչության գործունեության տարեկան ծրագրերի հաստատման և հավանություն տալու հարցերը որոշվել է իրականացնել հեռակա քվեարկությամբ:

Էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2020 թվականի նոյեմբերի 24-ին և ավարտվել 2020 թվականի նոյեմբերի 25-ին:

Քվեարկության նյութերը ներկայացվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

**Հարցեր՝**

**1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:**

**2. Համանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվին:**

**3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:**

**4. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:**

**Քվեարկությանը մասնակցել են՝**

Մ. Առաքելյան - Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար (Խորհրդի նախագահ)

Լ. Նանուշյան - Առողջապահության նախարարի տեղակալ

Ա. Ասոյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար

Ա. Ավանեսյան - Էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Ք. Գրիգորյան - Արդարադատության նախարարի տեղակալ

Կ. Բրուտյան - Ֆինանսների նախարարի առաջին տեղակալ

Շ. Դանիելյան - Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար

**Քվեարկությանը չեն մասնակցել՝**

Գ. Գրիգորյան - «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության հիմնադիր

Հ. Պողոսյան - Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության (ՀԱԳՄ) նախագահի գլխավոր խորհրդական

Վ. Պետրոսյան - Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրփանճեան հանրային առողջապահության ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր

**Քվեարկությունը համարվում է կայացած:**

**Քվեարկության արդյունքում.**

1) Մ. Առաքելյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացրել է առաջարկ՝ կցվում է),

2) Լ. Նանուշյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացրել է առաջարկ՝ կցվում է),

3) Ա. Ասոյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ (ներկայացրել է առաջարկ՝ կցվում է),

4) Ա. Ավանեսյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

5) Ք. Գրիգորյանը բոլոր հարցերին քվեարկեց կողմ,

6) Կ. Բրուտյանը 1-ին, 3-րդ և 4-րդ հարցերին քվեարկեց կողմ, իսկ 2-րդ հարցին՝ դեմ (ներկայացրել է առաջարկ՝ կցվում է),

7) Շ. Դանիելյանը քվեարկեց կողմ:

Քվեարկության շրջանակներում անդամների կողմից ներկայացված առաջարկությունները քննարկվել են և նյութերում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

**Քվեարկության արդյունքը՝ 7 կողմ (2-րդ հարցին 1 դեմ):**

**Խորհրդի անդամներից 3-ը չեն քվեարկել:**

**Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո խորհուրդը որոշեց.**

**1. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականին իրականացվող ստուգումների տարեկան ծրագիրը:**

**2. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվին:**

**3. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:**

**4. Հաստատել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը:**

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ